**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց հանդիսավոր զորակոչին**

Հունվարի 11-ը Տավուշի մարզում առաջին զորակոչային օրն էր: Մարզի բոլոր տարածաշրջաններում 2015 թվականի ձմեռային զորակոչի մեկնարկը տրվեց մեծ հանդիսավորությամբ: Զորակոչիկներին բանակ ճանապարհելու համար Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի, Դիլիջանի զինկոմիսարիատների մոտ էին հավաքվել մարզի ղեկավարության Իջևանի զինկոմիսարիատի մոտ արարողությանը մասնակցեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Ողջունելով զորակոչիկներին, մարզպետի տեղակալը բարեխիղճ ծառայության համար ՀՀ պաշտպանության նախարարի կողմից տրված շնորհակալագրերը հանձնեց արդեն Հայկական բանակում ծառայող տավուշցի զինվորների Անդրանիկ Դավթյանի / Իջևան/ և Անուշավան Ղևոնդյանի / Այգեհովիտ/ ծնողներին: Իսկ 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի շնորհակալական նամակը հանձնվեց սևքարեցի Կարեն Մայիլյանի ծնողներին:ներկայացուցիչներ, համայնքների ղեկավարներ, ծնողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ: